

ԹԱՄԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏՄԻՉԻ ԵՐԿՐՈՒՄ ԵՂԱԾ ՄԻ ՔԱՆԻ ԻՐԱՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԸՈՒՐՁ

Պարոյր Սուրադեան

1923 թ. անուանի պատմաբան Ի. Զալախիչուկին երեւան բերեց Թամար թագուհու գահակալութեան տարիների մասին պատմող մի նոր երկ, որ այսօր կովկասագիտութեան մէջ յայտնի է Թամարի երկրորդ պատմիչ անունով¹: Ուսումնասիրութիւնը պարզեց, որ այն եղել է XVIII դարի առաջին տասնամեակներին Վրաց պատմութեան (Քարթլիս ցիւղերբայի) համահաւաք խմբագրութեան մշակող Վախտանգ Զ-ի կազմած կրթեալ արանց ձեռքին:

Ի. Զալախիչուկու բացայայտած բնագիրը պահպանուել է ճալաշուիւնան կոչուող XVI դարի գրչագրում՝ Q-207 (գիտական հրատարակութեան մէջ նշանակուած է C նիշով), սակայն այդ վերաբերում է բնագրի առաջին մասին, մինչ նրա երկրորդ կէսը լրացուած է 1731 թ. ընդօրինակութեամբ (յայտնի է C նշումով)²: Ի. Զալախիչուկու քննութեամբ յայտնի դարձաւ նաեւ, որ կրթեալ արանց կամ Վախտանգեան կոչուած խմբագրութեան կազմողները բաւականաչափ հմտօրէն կարողացել են Թամարի երկու պատմիչների երկերը յարասել եւ ստեղծել միասնական բնագիր՝ մասերն իրար կապող ընդմիջարկութիւններով: Ի. Զալախիչուկին նրանից եւս քաղեց այն բնագիրը, որ իր վրայ պիտի կրէր Թամարի երկրորդ պատմիչ վերտառութիւնը, եւ պատրաստեց հրատարակութեան: Աշխատասիրութիւնը լոյս տե-

սաւ ետմահու՝ 1944 թ.³, սակայն մինչ այդ գիտնականի թոյլտուութեամբ այս բնագրի վրայից յուշարձանը ռուսերէն էր թարգմանել եւ Յ. Օրբէլու խմբագրած „Памятнику эпохи Руставели“, ժողովածուի նիւթերի շարքում հրատարակել վրացագէտ Վ. Դոնդուան⁴: Թարգմանութիւնը կատարուած է հմտութեամբ, բայց առանց ծանօթագրութեան ու մեկնաբանութիւնների խիստ համառօտ առաջաբանով: Վ. Դոնդուան այս յուշարձանին վերստին անդրադառնալու առիթ ունեցաւ երկու առանձին յօդուածներով, որոնք զետեղուած են նրա Պատմական հետազոտութիւններ ժողովածուի երկրորդ հատորում: Առաջինը Թամարի դարաշրջանի ընդհանուր բնագրութեանն է վերաբերում (ռուսերէն), երկրորդը նուիրուած է «Թամարի ժամանակի էրմիոնթասայ» եզրի քննութեանը (վրաց.)⁵:

Ամփոփելով յուշարձանի յայտնաբերման ու ուսումնասիրութեան պատմութիւնը՝ ասենք նաեւ, որ Ի. Զալախիչուկու այն վարկածը, թէ սոյն պատմութեան հեղինակը կարող է լինել բնագրում իսկ յիշատակուող արքունի տնտես (էզոսմոճղուարի) եւ թագաւորական խաչը կրող Բասիլը (Բարսեղը), հաստատութեան որեւէ նոր կուտան չունի, բայց եւ ընդունուած է վրացագիտութեան մէջ պայմանականօրէն նրա անունով կոչել, Թամարի առաջին

պատմութիւնից տարբերելու համար: Քարթլիս Ցիւղերբայի գիտական-համահաւաք հրատարակութեան մէջ ներկայացուած է Ի. Զալախիչուկու պատրաստած բնագիրը՝ Բասիլի էզոսմոճղուարի հեղինակութեամբ ու Պատմութիւն արքայից արքայ Թամարի խորագրով⁶:

Հեղինակը ժամանակակից է ներկայանում նկարագրուած անցուղարձերին եւ, հակառակ Թամար թագուհուն (1184-1207) ներբողելու անթաքոյց ցանկութեանը, համեմատաբար ճշմարտապատում կեցուածքով է պատմում, ուստի խօսքն աւելի հասկանալի է, չափազանցութիւնները՝ սակաւ, ոճը՝ հանգիստ, թէեւ նրա պատմական դրուագներն մէջ կան Թագակիրների պատմական ու ներքուտանը անուներ կրող երկի հատուածների հետ զուգորդուող էջեր, սակայն ոչ քիչ դէպքերում լրացնում է նրան, մասամբ օգնում նախորդ պատմիչի երկի խրթնութիւններն ու խաթարումները հասկանալուն:

Ինչպէս եւ սպասելի էր, պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բէկը, Ի. Զալախիչուկու արտօնմամբ, դեռ մինչեւ վրացերէն բնագրի հրատարակութիւնը ծանօթացել է վրացերէն ձեռագրի (Q-207) բովանդակութեանը եւ այնտեղից որոշ քաղումներ կատարել 1936 թ. լոյս ընծայած Վրաց աղբիւրները աշխատութեան երկրորդ հատորում⁷:

Սակայն այլեւայլ պատճառներով նրա քաղումներից դուրս են մնացել հայոց եւ Արեւելքի պատմութեանը վերաբերող ուղղակի կամ անուղղակի կարեւոր հատուած-

ներ, ինչը եւ խոչընդոտել է այս երկում եղած առանձին վկայութիւնների՝ հայագիտութեան եւ հայ արեւելագիտութեան շրջանակներում ծանօթութեանն ու գնահատութեանը: Ստորեւ թարգմանաբար ներկայացնում ենք մի հատուած, ուր պատմում է Գանձակի ու Շամքորի նուաճման մասին: Մահմեդականների խալիֆի բաժանած ոսկուն ի պատասխան Պարսկաստանից մինչեւ Հնդկաստան, Սամարղանդ ու Դերբենդ զօրքեր են հաւաքում Ատրպատականում եւ պատրաստում արշաւանքի: Կացութեանը տեղեկացած Թամարը կանչում է իր բոլոր վազիրներին, խորհրդակցում եւ Անտոն Ճղոնդի գելին հրամայում շտապ զօրք հաւաքել: 10 օրուայ ընթացքում նրանք գումարում են Սոմխիթում, որոնց Թամարը դիմում է թշնամու բազմութիւնից չսարսելու կոչով, օրհնում է նրանց, սակաւ օրեր անց գալիս հասնում է Սարգիս Թմոզուեցին ու ամենայն ինչով զօրքին ի մարտ պատրաստում:

«Սակայն այժմ հարկ է յիշատակել, թէ մեր զօրքերը ինչպիսի օժանդակութիւն ստացան Թամարի արցունքներից. արդէն մտան նրանց երկիր եւ տեսան Գանձակի եւ Շամքորի միջեւ կանգնածներին, որոնք բազմութեամբ անհաշիւ էին թուով՝ ինչպէս մորեխներ: Բոլորն անմիջապէս ցած թռան ձիերից, երկրպագեցին Աստուծոյն ու արտասուալից աղբրսցին սուրբ Խաչին եւ, իբրեւ արծիւներ, սուրացին ու յարձակուեցին՝ ինչպէս ինձեր: Առաջին իսկ մարտին իրենց սուրն ու Աստոյ զօրակցութիւնը գործի դնելով՝ ցիրուցան արին նրանց բանակի տասնեկաշարը եւ մկները պէս կոտորեցին. հաւերի նման բռնում էին նրանց մեծամեծ ամիրաներին՝ բաղդադցիներին ու մոսուլցիներին, աւրիացիներին (sic)⁸ ու իրաքցիներին, ատրպատկանցիներ-

1 Օջանջ Ջջանջիճեան, տեխնոլոգիան տարբեր լեզուներով, Ե. VIII, տձ., 1977, թ. 373-395.
2 Ժորտեան Եւրոպեան, Եւրոպեան լեզուներով տեխնոլոգիան տարբեր լեզուներով, Ե. II, տձուոնն, 1959, թ. 015-021, 115-150.

3 Դանուոյ Եւրոպեան լեզուներով տեխնոլոգիան տարբեր լեզուներով, Ե. VIII, տձ., 1977, թ. 373-395.
4 Памятнику эпохи Руставели, А., 1938, ст. 32-39 (առաջաբան), 39-76 (բնագիր).
5 Ե. Դոնդուան, Եւրոպեան լեզուներով տեխնոլոգիան տարբեր լեզուներով, Ե. II, տձ., 1973, թ. 133-136, 137-143.

6 Ակադ. Կ. Կեկելիճէն Ռիմք չի գտնում նման հեղինակային վերագրման համար: Ի տարբերութիւն Ի. Զալախիչուկու առաջարկած գրութեան թուականների (1210-1213), նա գրութեան ժամանակ է համարում 1236 թուականից յետոյ եկող տարիները (Յ. Եւրոպեան լեզուներով տեխնոլոգիան տարբեր լեզուներով, Ե. II, տձ., 1958, թ. 277):
7 Լ. Մելիքսեթ-Բէկ, Վրաց աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, Բ. Եր., 1936, էջ 33-36

8 Աֆրիկացիներին (sic). այսպէս է ընկալել Վ. Դոնդուան:

րին, իրանցիներին եւ բազում այլ տեղացիներին, որոնք իբրեւ Աիշաթ էին եկել, ինչպէս ասենք՝ Հնդկաստանից դահիճներ: Նրանց մօրուքից բռնած՝ քարչ էին տալիս Դաւիթ թագաւորի առաջ:

Եւ նկատելի էր Աստոնյ մեծահարաչ ու յաւելեալ օժանդակութիւնը, ուստի [պարտուածները] իրենց ինչքերը իրենք էին հանում եւ ինքնին լցնում ուղտերի ու գրաստների հակերի մէջ, ինքեան ծառայում աւարառութեանն ու գերեզմարումին: Իսկ աթաբեկ Բուբաքարը գովեց իր հնարքն⁹ ու կարողութիւնը, ուստի ինչ-որ տեղ փոքր հերկի հասնելով՝ հողի մէջ պատասպարեց իր անձը:

Այսպէս, Աստոնյ ողորմութեամբ լիացած հասան Գանձակ, եւ քաղաքացիները նրանց դիմաւորեցին՝ իրենց անձերի համար ապահովութիւն աղբրսելով եւ քաղաքը կամաւոր յանձնելով: Դաւիթն ապարանք տարան, բազմեցրին սուլթանական դահին, սուլթանական փանջանոքաթ հնչեցրին եւ խոզի մսով առատ կերուխում կազմակերպեցին: Բոլոր գանձակցիները նրա առաջ մեծ ընծաներ ու հարկ բերին, բաց արեցին նրանց գանձարանները եւ բազում թանկագին փիաւ-ջամի ու փեշխումներ շատ գանձերի հետ առան-բերին: Եւ որոշ ժամանակ [զօրքերը] բանակում էին քաղաքից դուրս, քանի որ փնտրում էին աթաբեկին եւ չէին կարողանում գտնել:

Շամքորեցիները նոյնպէս խաղաղութիւն ու հպատակութիւն խնդրեցին:

Այստեղ, [սակայն], Ջաքարիան ու Իւլանէն չկարողացան բարւոք վարել. այս էր միայն սոյն յաղթանակի պակասութիւնը: Շարուան-չահերի փեսայ. ոմն պարսիկ մարդ կար Միրմիրան անունով սա աղբրսանօք ինչ-որ խնդրանքով Թամարի մօտ

9 Բնագրում եղել է օրն, որ վ. Դոնդուան ընկալել է 376 - 679, մինչդեռ յ.Յ. II, 127 էջում սրբագրում է 676 - 679, գորոթիւն, կարողութիւն:

էր եւ [միա]ժամանակ պատրաստ Դաւիթին ծառայելու: Մինչեւ Թամարի տեղեկանալը այս Միրմիրանը ջանաց ստանալ Գանձակը: Եւ տուեցին ի պահպանութիւն:

Երբ Բուբաքարն իմացաւ մեր զօրքերի տուն դառնալը, յայտնուեց, եւ գանձակցիները քաղաքը հէնց նրան տուեցին, մինչդեռ Միրմիրանին վախով ողջութեամբ արձակեցին, ինչպէս ասացի:

Քիչ օրեր անց ուղեւորուեցին-եկան զօրքերը՝ մեծապէս ուրախացած այս օղիմպիական յաղթանակով, այս յոյժ բարձրագոյն գովելի յաղթութեամբ, որպիսին արել էր Աղեքսանդրոսը Դարեհի հանդէպ:

Երբ [զօրքերը] եկան մօտեցան, Թամարը եւս դիմաւորում էր նրանց, որովհետեւ Սարգիս Թմոզուեցին [նախապէս] գնացել էր [զօրաց] գալուստը նրան աւետելու: [Թամարը] ուրախանում էր եւ գոհանում Աստուծոց, ողջունում իւրաքանչիւրին՝ իբրեւ որդու: Եւ ուրախանում էին նրանք Թամարի տեսութեամբ:

Թիֆլիսի շրջակայքի բոլոր դաշտերը այլեւս մարդ, ձի, գրաստ ու ուղտ չէր տեղաւորում: Իսկ գերիների առատութիւնն այնքան նեղութիւն էր ստեղծում, որ նոյնիսկ քաղաք էին բերում եւ մէկ կոտ [հատիկով] վաճառում: Եւ սրա վկան ինքն Աստուած է. թող ապագայ ժամանակներում որեւէ մէկին սա սուտ չերեւայ եւ հեքիաթ չթուայ:

Իսկապէս հերմիանուական ամենաանուանի այդ մարդիկ՝ Ջաքարէն ու Իւլանէն, ստացան թագաւորութեանը [յատկացուող] փանջեքն ու Դիդուբէի դաշտից մինչեւ Աւճալա տեղաւորեցին՝ բոլորը բեռնուած ուղտ, բոլորը զարդարուած ձի: Այդպէս [շարեցին] նաեւ բոլոր այդ ամիրաներին՝ իրենց դրօշակներով. նախ՝ խալիֆի դրօշակը, յետոյ՝ աթաբեկի, յետոյ՝

յաջորդները: Քաղաքի դարպասներից¹⁰ մինչեւ կլգանի կիրճը բոլորը լցրին գերիներով: Դուրս բերին Թամարին եւ նուիրեցին [այդ ամէնը], իսկ պարսիկ բոլոր գլխաւորներին [նրան] երկրպագել տուեցին: Յետոյ իրենք էլ երկրպագեցին եւ Աստուծով երջանիկ թագաւորութիւն մաղթեցին¹¹:

Նկարագրուած գործողութիւնները ժամանակագրելու համար աղբիւրները ուղղակի ցուցումներ չեն տալիս, սակայն օժանդակ վկայութիւնների հանգամանալիքնութիւնից յետոյ Իւ. Ջաւախիշուրիին հաւանական է նկատում Թ. Ժորդանիայի մակերած թուականը՝ 1195¹²: Մինչ այդ եղած իրադարձութիւնների շարքից Հայաստանի պատմութեան համար մասնաւոր կարեւորութիւն ունեն Գեղարքունիքում տեղի ունեցած կռիւները, ինչպէս նաեւ արքունակի պաշտօնէութեան շրջանում Թամարի կատարած փոփոխութիւնները: Հարցի քննութիւնը թողնելով մէկ այլ առիթի դառնանք մեր քաղումի մէջ եղած խնդիրներին:

Արդէն ասացինք, որ պատմական այս աղբիւրին եւս, ինչպէս Թամարի առաջին Պատմութեան հեղինակին, ներբողումն ու չափազանցութիւնը խորթ չեն, պատմական իրողութիւնները հպանցիկ եւ ուրուագծերով են ներկայացուած եւ այլն: Սակայն կան եւ ժամանակի միւս աղբիւրներում չվկայուած եւ հայրենի պատմագրութեանն անծանօթ մնացած իրողութիւններ: Ներկայ

10 Թաքարիի տեղեկութեամբ, Թիֆլիս քաղաքն ուներ հինգ դուռ՝ 1. Մեղանի դուռ, 2. Կարսի դուռ, 3. Փոքր դուռ, 4. Ռաբարթի դուռ, 5. Սողդեքի (իմա՝ Սագոդեքի (գերեզմանոցի) դուռ (տե՛ս Յ. Յեքեոս, Խոսեթրոս ժոյճան, Գ. II, տձ., 1983, թ. 624-630):

11 յ. Յ. II, 126-128:

12 յ. Թոնոյեճո լա ինքա մասալա ինքոթոյե-լոս օնթրոսիս, Գ. I, Եջ. 1892, թ. 282, օյ. չճայսիթոյե, տե՛ս յեղեթոս..., Գ. II, 1983, թ. 267-270.

դէպքում մենք նկատի ունենք մի քանի պարսկալեզու եզրեր, որոնց ճշգրտումը ընդլայնում է մեր պատկերացումների շրջանակը: Այսպէս, Երկայնաբազուկ (Մխարգեթ) եղբայրների գործունէութիւնը ներկայացնող հայկական, վրացական ու այլալեզու պատմողական ու վիճաբար բազմաթիւ աղբիւրներից եւ ոչ մէկում, բացառութեամբ մեր քննարկուող բնագրի, եղբայրները հերմիանուական «չեն յորջորջուած»: Վ. Դոնդուան իր ուսմերէն թարգմանութիւնից տասնամեակներ անց (1967) առանձին յօդուած նուիրեց այդ եզրի ուսումնասիրութեանը: Պարզուած է, Հերմիանոք-Հերմիանուական որակումը կապուած է երբեմնի առասպելաբանութեան մէջ գոյատեւած եւ միջին դարերում յունական մշակութային աշխարհի հետ սերտ շփում ունեցող Կովկասեան միջավայրում ճանաչում գտած հերոսական կերպարի հետ, որի պահպանումն արձագանգն է այս վկայութիւնը¹³:

Սակայն մեզ զբաղեցնողը պարսկաարաբական մի քանի նորածանօթ եզրերն են. «իբրեւ Աիշաթ գալը» անշուշտ արաբապարսկ. nešath փրկութիւն, ազատում, գերծում բառն է, որի բայական ձեւերն են՝ ...dadan, ...kardan, ...yafthan: Այդպէս են կոչուել օժանդակութեան եկած զօրքերը: «Թանկագին փիաւ-ջամի»-ն եւ փեշխումը դարձեալ

13 Վ. Դոնդուան յղում է Նապոլեոն Լանդէի «Grand dictionnaire»-ն (Ռո. II, յաւելում, էջ 832), որ մեկնաբանում է, որ Hermion-ը նոնն է, ինչ Ermensul-ը (Irmensul-ը) - «հին գերմանական թագաւոր, որը մահից յետոյ աստուածացուեց»: Վ. Դոնդուանի արդարացի դիտարկմամբ, սակայն, վրաց հեղինակի երկում եղածը առասպելի տեղական արձագանգն է եւ ոչ փոխառութիւն գերմանական իրողութիւնից: Այդ նշանակում է, թէ միջնադարեան Կովկասում տակաւին պահպանուելիս է եղել հին ժամանակներից այստեղ թափանցած մի առասպել, որի արձագանգը տեղական մատենագրական այլ յուշարձաններում լսելի կամ դիտարկելի չէ: Գ. Թոնոյեճո, Թոնոյեճո «Երմիոն» - «Թոնոյեճո», տձ. 1967, թ. 152-156, նաեւ Գ. Թոնոյեճո, Խոսեթրոս ժոյճան, թ. 137-143.

արաբա-պարսկական փոխառություններ են՝ phiale (փիալէ) եւ jam (ջամ) գաւաթ, բաժակ, phis-xom – աման, պնակ, որ գործածական են դարձել արեւելեան կենցաղի այդ առարկաների մուտքով կովկասեան կենցաղ:

Առաւել հետաքրքրականը, սակայն, պարսկերէն phanj (փանջ) – հինգ բառի բարդութեամբ կազմուած փանջանորթաք եւ փանջեք եզրերի կիրառութիւնն է: Վրացերէն բնագրի «ფანჯანობათასა სანჯულთობსა უკრეს»-ի (բառացի՝ «սուլթանական փանջանորթաթ նուագեցին») եզրը կազմուած է phanj (փանջ) – հինգ եւ nobath (նորթ/նորթաթ) բառերից: Կառուցուածքը ճանաչելի է, բայց դժուար է ստոյգ առարկայական նշանակութիւնը սահմանել հինգ թմբուկ զարկել, հինգ նուագարանով համո՞յթ, թէ՞ հինգ անգամ թմբուկ զարկել: Այս տերմինի ուսումնասիրութեամբ տարիներ առաջ զբաղուեց արեւելագէտ Գիուլի Ալասանիան¹⁴ եւ յանգեց միանգամայն ընդունելի եզրակացութեան. «Հինգ թիւը պէտք է արտացոլի ոչ թէ նուագարանների, այլ թմբուկ զարկելու որքանութիւնը: ...Սելջուկեան սուլթանների պալատում թմբուկ էին զարկում ետմիջօրէին՝ երրորդ նամազի ժամանակ, որից յետոյ աղօթք էին անում: Սա սուլթանի նորաք էր կոչւում: Քանի որ թմբուկ զարկելն ու նամազը միաժամանակ էր կատարւում, իսկ, ըստ շարիաթի, իւրաքանչիւր մահմեդական պարտաւոր էր նամազի աղօթքը Հինգ անգամ ասել, ուստի նորաք զարկելը եւս, երեւում է, նամազի պէս կատարւում էր օրը Հինգ անգամ»¹⁵:

Ինչ վերաբերում է փանջակի (resp. փանջեքի) կառուցուածքային իմաստին,

14 გიული ალასანი, ორი ტერმინის განმარტებისათვის თამარის მეორე ისტორიკოსის თხზულებაში. “აღმოსავლური ფილოლოგია”, ტ. III, თბ., 1973, გვ. 205-208
15 Անդ, էջ 207-208

Մորինի բառարանը այն գիտէ իբրեւ do bərabar dəhek – երկու հաւասար տաւ-մէկ, կամ նեֆիսի բառարանը նորից մատնացուցում է xams-ը եւ աւելացնում yek joz – հնգեակ եւ մէկ առանձին կամ հինգ մաս առանձին: Այս բացատրությունները բխում են բացառապէս բարդութեան մասերի իմաստաւորումից, մինչդեռ նրանց անծանօթ է վրացական XIII դարի աղբիւրում եզրի կիրառական նշանակութիւնը, որ յանգում է հետեւեալին. արշաւանքից աւարով վերադարձող վրաց թագաւորութեան զօրքերը, ընդունուած կարգի համաձայն, իրենց բերած աւարի մէկ հինգերորդը պարտաւոր են յանձնել պետութեանը՝ ի ձեռն զօրավար եղբայրների, որոնք միաժամանակ հանդէս են գալիս իբրեւ արքունի պաշտօնեաներ՝ Զաքարիան ամիրսպասալար, իսկ Իւանէն՝ մասխուրթ-ուխուցես ապա եւ աթաբէկ: Հետաքրքիր է, որ այս հարկատեսակը միջնադարեան հայկական աղբիւրները չեն արձանագրում¹⁶: Եզրը կառուցուածքով նոյնական է չարէք, իմա 1/4 հարկատեսակին:

Հայկական աղբիւրներում այս հարկի ու նրա անուան բացակայութիւնը հակուած ենք բացատրել երկու հանգամանքով.

ա) Աւարից պետութեան մասնահանման կարգը վաղ միջնադարում գոյութիւն չպիտի ունենար, այլապէս այն աղբիւրներում, ուր պատմւում է Հայոց բանակի յաղթական գործողութիւնների եւ աւարակալման հնարաւորութեան մասին ինչ-որ տեղեկութիւն կ'ունենայինք:

բ) Ազգային պետականութեան բացակայութեան դարերին եղած Հայոց զօրական խմբերը ո՛չ աւարակալել կարող էին, ո՛չ էլ գոյութիւն չունեցող պետութեան համար մասհանում կատարել: Շատ հնարաւոր է, որ աւարից մասհանումը սելջուկեան ար-

16 Այն չենք գտնում ՆՀԲ-ում, Բուզանդացու Ստորին հայերէնի բառարանում, Հ. Աճառեանի՝ պարսկերէնից փոխատեալ բառերի ցանկում եւ այլն:

շաւանքներից յետոյ սկիզբ առած լինի՝ իբրեւ արդիւնք նուաճուած անհաւատներին երկիրը երեք օր զօրքերի կամքին յանձնելու մահմեդական սովորոյթի: 1121 թ. Դիզգորի ճակատամարտում Դաւիթ Շինարարի յաղթանակը նկարագրելիս Մատթէոս Ուռհայեցին շեշտը դնում է «սաստիկ եւ ահաւոր կոտորած զօրացն թուրքաց»-ի վրայ¹⁷, մինչդեռ վրաց պատմիչը այդ ամէնին աւելացնում է անհնարին աւարառութիւնը եւս՝ մէկ առ մէկ թուարկելով գրաւած արժէքները: Այս ճակատամարտից մէկ տարի անց Դաւիթը չորս հարիւր տարուայ գերութիւնից ազատագրեց երբեմնի մայրաքաղաք Թիֆլիսը, եւ որովհետեւ քաղաքի բնակչութիւնը խիստ դիմադրութիւն էր ցոյց տուել վրաց զօրքին, Դաւիթը իր զօրքերին արտօնեց երեք օր թալանել քաղաքը¹⁸, բայց աւարի մէկ Հինգերորդը պետութեանը յատկացնելու մասին խօսք չարեց:

Կարծում ենք՝ այս փաստը խօսում է այն բանի մասին, որ Դաւիթ Շինարարը իր զայրոյթն արտայայտել է՝ քաղաքին տիրացած օտարներին իրենց իսկ վարուելակերպով պատասխանելով, բայց ոչ փանջակ սահմանելով:

Ինչ վերաբերում է փանջակի կազմութեանը, պիտի աւելացնենք, որ այն բացարձակ նոյնակառոյց է նաեւ հայերէնում նորագիւտ համարուող դահիակ բառի հետ՝ երբեմն դահիակ տարբերակով, որ նոյն տաւնորդն է՝ տաւից մէկը, որ գործածական է՝ Սուրբ Գրքի թարգմանութիւններից սկսած (Հմմտ. Հ. Աճառեան, ՀԱԲ, Ա 615): Նորից կրկնենք՝ փանջակ/փանջեք մէկ Հինգերորդ է նշանակում, Հինգ մասից մէկը¹⁹: Որ այն եղել է աւարից ու թալանից պետութեանը յատկացուող մասհանում, վրացական աղբիւրներում վկայւում է առաջին անգամ:

17 Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 18 յ. 3. Թ. I, տծ., 1955, գვ. 340-342

19 Հմմտ. տծողոսեոս ուղտորո, Թ. I, տծ. 1990, գვ. 102-103: